ԴՊՐՈՑԱԿԱՆ ՐԵՖՈՐՄԸ ՊՐՈՒՍԻԱՅՈՒՄ

Դպրոցական բեֆորմի խնդիրը քննելու համար կոնֆիրինցեալ գումարած ուսուցիչների ժողովին ներկայացրած են կառավարութիւնից հետևեալ 14 հարցերը։

1) Այժմ գոյութիւն ունեցող միջնակարգ դպրոցների տեսակները պէտք է արդեօք իրանց այժմեայ տարբերութեամբ պահպանել, թէ հարկաւոր է միմեանց խառնել ա. կլասիկական գիմնազը բէալական գիմնազի հետ. բ. բէալական գիմնազը բարձր բէալական դպրոցի հետ։

2) Կարելի է արդեօք գոյութիւն ունեցող դպրոցների երեք տեսակները (գիմնազական, բէալ-գիմնազական և լատիներէնից զուրկ ուսումնարան) և կամ նոցանից երկուսի համար մի ընդհանուր պատանդան ստեղծել։ Վերջին դէպքում պէտք է արդեօք՝ ա. գիմնազների և բէալ-գիմնազների երեք ստորին դասաների համար գոյութիւն ունեցող միակերպութիւնը ընդարձակել մինչև ունտեր-սեկունդա, իսկ այդ դասատնից վեր, բարձր բէալական ուսումնարանի ծրագիրը մտցնել (միացումն բէալ-գիմնազի կլասիկական գիմնազի հետ)։ Թէ պէտք է լատիներէնը բէալ-գիմնազներում մինչ ունտեր-տերցիա լեռնաձգել և լատիներէնից զուրկ երեք ստորին դասատները լրացնել քաղաքացիական ուսումնարանի համար միացումն բէալական գիմնազի բարձր քաղաքացիական—Bürgerschule—ուսումնարանի հետ)։

3) Ցանկալի է արդեօք գիմնազների ծրագիրների մէջ հին լեզուներին լաակացրած ժամերի թիւը սահմանափակել և այնպէս վարել, որ դասաժամերի թիւը 3 ստորին դասատներում իջեցնել, անգլիերէնը կամաւոր կերպով ներմուծել և գծագրութիւնը քւարտալից վեր պարտաւորեցուցիչ դարձնել։ Այն սահմանափակման հետ չը պէտք է արդեօք լատիներէն դրաւորը որպէս նպատակ և լունարէն վերլուծութիւնը պրիմալում դէն գցել։

4) Ցանկալի է արդեօք, բէալական գիմնազների ծրագրի մէջ 1882 թւականի կարգադրութիւնը լատիներէնի ուժեղացնելու մասին պահպանել, թէ նորան պակասացնել և բոլոր դասերի թիւը նւազացնել, մանաւանդ ստորին դասատներում։

5) Ցանկալի է արդեօք։

ա. այն տեղերում, ուր գիմնազական կամ ռէալ-գիմնազական հիմնարկութիւններ կան, երեք ստորին դասատներում տեղական պահանջին համեմատ լատիներէնից դուրս և նորա փոխարէն գերմաներէնը ուժեղացնել և նոր լեզվի դասաւանութիւն մտցնել։

բ. այն տեղերում, ուր միայն լատիներէնից զուրկ ուսումնարաններ կան, նոցա երեք ստորին դասատներում, տեղական կարիքին համեմատ, լատիներէնը մտցնել։

գ. բոլոր եօթնատարիճանի ուսումնարանները (պրոգիմնազներ, ռէալական պրոգիմնազներ, ռէալական ուսումնարաններ) 6 աստիճանի վերածել։

դ. ռէալական դպրոցների և քաղաքացիական դպրոցների ծրագիրը հաւասարացնել և երկուսն էլ այնպէս կազմել որ նոցա շարունակութիւնը բարձր ռէալական դպրոցներում հեշտանայ։

6) Անկալի է արդեօք, դասատիճանի դպրոցներում այն աշակերտներին ինկատի առնելով, որոնք վերջացնելուց առաջ կեանքի մէջ են մտնում, 6-երորդ տարուայ կուրսում համեմատապէս աւարտման ծրագիր մտցնել։

7) (Այս յօդուածը վերաբերում է դասերի և աշակերտների քանակութեան վերաբերեալ խնդիրներին)։

8) Դպրոցական ժամերը պակասացնելով անգամ, որքան արդեօք հնարաւոր է, ոչ ժեղ մեթոդական դասաւանութիւնով՝ գլխաւոր պարապմունքը ուսումնարանում կատարել, մանաւանդ ստորին դասատներում։

9) Ինչ պէտք է կատարուի որ մարմնամարզութեան դասաւանութիւնը, որի համար այժմ շաբաթը երկու դաս է նշանակուած. բարձրանայ, և ինչ ուրիշ բաներ են հարկաւոր պատանեկութեան մարմնական կրթութիւնը խնամելու համար։

10) Կարելի է արդեօք հասունութեան քննութիւնը բաց թողնել, իսկ եթէ ոչ՝ ինչպէս կարելի է այն աւելի պարզ դարձնել։

11) Ինչ փոփոխութիւններ է հարկաւոր մտցնել բարձր դպրոցներում ապագայ ուսուցիչների դիտութեան կրթութեանը համար։

12) Ինչ միջոցներով կարող են բարձր դպրոցները, կարելիին չափ ներդաշնակութեամբ ընտանիքի հետ՝ ներգործել աշակերտի բարոյականի վերայ։

13) Ինչ փոփոխութիւններ են ցանկալի միամտայ ծառայութեան իրաւունք ստանալու համար։

Ա. այն դպրոցներում, ուր ուսման ընթացքը գ. տարի է տևում։

Բ. բարձր քաղաքացիական դպրոցներում։

14) Եթէ ապագայում բարձր քաղաքացիական դպրոցներում (höhere Bürgerschule) միամտայ ծառայութեան իրաւունքը աւելի շուտով ձեռք բերի, քան ուրիշ ուսումնարաններում, այն ժամանակ այն դպրոցների մէջ աւելի մեծ կարիք կը զգացուի։ Ինչ պէտք է արած այդ կարիքը լրացնելու համար։ Միացումն բարձր քաղաքացիական դպրոցների՝ գիմնազիան ունեցող դպրոցների հետ, վերջիններիս մի մասի լեղաշրջումն, նորա կազմութիւնը բարձր քաղաքացիական դպրոցների։ որոնց կամ տէրութիւնը կը պահպանէ համ տէրութիւնը կ'օժանդակէ)։